ՀՐԱՉ ՄԻՔԱՅԵԼԻ ԲԱՐԹԻԿՅԱՆ

Կյանքի 84-րդ տարում իր մահկանացուն կնքեց ականավոր բյուզանդագետ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (1996), Աթենքի ակադեմիայի (1980) և Հռոմի «Տիբերինա» արվեստի, գրականության և գիտության ակադեմիայի (1987) ակադեմիկոս Հրաչ Միքայելի Բարթիկյանը:

Հրաչ Բարթիկյանը ծնվել է 1927 թ. Աթենքում, բանասեր-հրապարակախոս Միքայել Բարթիկյանի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական վարժարանում: 1945 թ. ավարտել է հունական գիմնազիան: 1946 թ. ընտանիքով ներգաղթել է Հայաստան: 1953 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Ուսումնառությունը շարունակել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ընթացել է Լենինգրադում ակադ. Հ. Օրբելու ղեկավարությամբ: 1958 թ. Լենինգրադի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության աղբյուրներ» թեմայով, որը ռուսերենով լույս է տեսել Երևանում 1961 թ.: 1971 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Բյուզանդական Դիգենիս Ակրիտաս էպոսը և նրա նշանակությունը հայագիտության համար» թեմայով: Այս արժեքավոր աշխատությանը հետագայում կցվեց էպոսի՝ նրա հեղինակած թարգմանությունը:

1957 թվականից աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, 1980-2010 թթ. ղեկավարել է նույն ինստիտուտի «Միջին դարերի պատմության» բաժինը, եղել է գլխավոր գիտական աշխատող: Պատրաստել է բազմաթիվ գիտական կադրեր:

Նա 1995 թվականից Հայաստանի գրողների միության անդամ էր:

Բարթիկյանը 1981 թ. դարձել է «Հունաստանի բյուզանդական հետազոտությունների ընկերության», ապա «Հունական քաղաքակրթության հաստատության» պատվավոր անդամ: Շուրջ 150 գիտական հոդվածներից զատ՝ լույս է ընծայել 17 գիրք: «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ» մատենաշարով հրատարակել է

բյուզանդական մի շարք հեղինակների աշխատությունների հայերեն թարգմանությունները՝ ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով. (Պրոկոպիոս Կեսարացի (1976), Կոնստանդին Ծիրանածին (1970), Հովհաննես Սկիլիցես (1979), Թեոփանես Խոստովանող (1983), Թեոփանեսի Շարունակող (1990)): ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Գրական հուշարձաններ» մատենաշարով հայերեն հրատարակել է «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» էպոսը (1978), Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» աշխարհաբար թարգմանությունը (1973), Պրոկոպիոս Կեսարացու «Գաղտնի պատմությունը» (1987), «Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին Հանրապետության շրջանում (1918-1920)» աշխատությունը (1998):

Հ. Բարթիկյանը 1981 թ. արժանացել է ՀՀ ԳԱԱ «Մեսրոպ Մաշտոց» մրցանակի, Սալոնիկի Արիստոտելյան համալսարանի Արիստոտելի անվան մեդալի:

«Հայ-բյուզանդական հետազոտություններ» հոդվածների երկհատոր ժողովածուի համար 2004 թ. Հ. Բարթիկյանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի: Ժողովածուն 2006 թ. համալրվեց երրորդ հատորով:

Հունարենով հրատարակել է «Բյուզանդիան հայկական աղբյուրներում» (1981), «Բյուզանդիա և Հայաստան» (1991), «Խավրասների բյուզանդական ազնվականական ընտանիքը» (1993) գրքերը:

Հ. Բարթիկյանը Հայոց պատմության ակադեմիական նոր բազմահատորյակի խմբագրական խորհրդի անդամ էր, երկրորդ հատորի պատասխանատու խմբագիրը: Ընդգրկուն է նրա ուսումնասիրությունների տպագրության աշխարհագրությունը՝ Երևան, Ս. Էջմիածին, Լոնդոն, Փարիզ, Լիսաբոն, Աթենք, Թեսալիկոն, Նիկոզիա, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Սոֆիա, Բուխարեստ և այլ վայրեր:

Հրաչ Բարթիկյանի գիտական ուսումնասիրություններն անանց արժեք են ինչպես համաշխարհային բյուզանդագիտության, այնպես էլ հայագիտության համար: Նրա հետազոտությունները գլխավորապես նվիրված էին հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանը: Դրանք տասնյակների հասնող գիտական թեմաներ, գիտության տարբեր բնագավառներ ու ուղղություններ են: Նա մանրազնին ուսումնասիրել է այդ հարաբերությունների թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր-եկեղեցական ոլորտներին առնչվող հիմնահարցերը:

Հ. Բարթիկյանի վաղ շրջանի ուսումնասիրությունները գլխավորապես նվիրված են պավլիկյան շարժմանը: Պավլիկյաններին վերաբերող հայ և օտարալեզու աղբյուրների համադիր քննությունը հնարավորություն տվեց նրան հեղինակելու շարժմանը վերաբերող ուսումնասիրությունների մի ամբողջ շարք, որում ներկայացվեցին պավլիկյաններին առնչվող բազում հիմնահարցեր: Հ. Բարթիկյանն առաջինն էր, որ հանգամանալի ներկայացրեց պավլիկյան համայնքի կազմակերպության հիմնահարցերը: Պավլիկյաններին առնչվող աղբյուրները գիտնականը հարստացրեց բյուզանդացի 11 հեղինակներից կատարած հայերեն հատվածական թարգմանություններով և դրանց կցված արժեքավոր ծանոթագրություններով, որոնց լավագույն գիտակներից էր:

Հետաքրքրական են հատկապես բագրատունյաց և հետբագրատունյաց շրջանի հայ-բյուզանդական հարաբերություններին, մասնավորապես Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականությանը Հրաչ Բարթիկյանի տված գնահատականները: Նա պատմաբանին հատուկ իրատեսությամբ վեր է հանում այդ քաղաքականության թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը:

Ակադեմիկոսի ուսումնասիրություններում կարևոր տեղ է գրավում Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիայի փոխհարաբերությունների հետազոտումը: Հիմնականում անդրադառնալով կողմերի եկեղեցական փոխհարաբերություններին՝ նա լիովին բացահայտեց դրանց քաղաքական ծալքերը:

Հրաչ Բարթիկյանը մեծ վաստակ ունի նաև վիմագիր արձանագրությունների ու կնիքների ուսումնասիրության բնագավառում: Այդ հարցում նրան մեծապես օգնում էր հին հունարենի հրաշալի իմացությունը: Ի դեպ, առաջինը Հրաչ Բարթիկյանն է ընթերցել Գառնիի բաղնիքի հունարեն հայտնի արձանագրությունը:

Վերջին տարիներին նա կրկին ձեռնամուխ եղավ հունարեն աղբյուրների թարգմանությանը՝ հայագիտությանը ժառանգելով Կեսարիայի մետրոպոլիտ Պարթենիոս Աթենացու՝ Երուսաղեմի Սուրբ վայրերի պատկանելության շուրջ հայ և հունադավան եկեղեցիների տարաձայնություններին վերաբերող «Պատմություն հայոց և հունաց տարաձայնության» (2008), Միքայել Ատտալիատեսի «Պատմության» և Իոաննիս Կ. Խասիոտիսի «Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ 1876-1996 թթ.» արժեքավոր աշխատությունների հայերեն թարգմանությունները՝ մանրամասն ու արժեքավոր ծանոթագրություններով: Պարթենիոս Աթենացու երկը ծանրակշիռ նշանակություն ունեցավ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ենթակայությանն առնչվող հայ և հույն համայնքների երկարատև տարաձայնությունների պատմական ճանաչողության առումով: Ակադեմիկոսն ավարտել էր նաև «Հայերը Բյուզանդիայում» կոթողային աշխատության շարադրանքը, որը դեռևս անտիպ է:

Հրաչ Բարթիկյանին հատուկ բարոյական բարձր նկարագրի առանձնահատուկ կողմերից էին ուղղամտությունն ու սկզբունքայնությունը: Հատկանշական է նրա անսահման հոգատարությունը հատկապես երիտասարդ գիտական սերնդի նկատմամբ: Նա իրապես գիտության նվիրյալ էր, անխոնջ մշակ՝ կոչում, որին հավատարմորեն ծառայեց իր ամբողջ կյանքում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ՀՀ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ